

Հէնց բարձրէն սկսած : Եթէ այս խնդիրը հիմնովին չլուծուի, շատ ուրախանալու չեն կանայք իրենց ազատութեամբ եւ տղամարդիկ իրենց ձեւական միակնութեամբ, որովհետեւ հարէմը ի վերջոյ աւելի լաւ է քան խառնակեցութիւնը» :

Ընկ. Ռուբէնի այս խօսքերէն եթէ զեղչենք «բարոյականի» անսպասելի դասը՝ որ կը հրամայէ թուրքերուն, չկը մնայ կրօնքի խրատելիակը (ժահեմտականութիւն թէ քրիստոնէութիւն ըլլայ անիկա) ընտանիք ստեղծելու գործին համար : Եւ որովհետեւ թուրքերը բազմակին են եղած, միակին չեն կրնար դառնալ, այսպէս պէտք է որ քրիստոնեայ միւրտաբնէն : Այս է մեր հեղինակին տրամաբանութիւնը :

Նախ շեշտենք, որ կրօնքը բաւական ժամանակէ ի վեր դադրած է հիմք ծառայելու թուրք ընտանիքի կազմութեան մէջ : Աղջմտութիւնը, կեանքի դաժան փորձառութիւններն ու պայմանները, անտեսական եւ հոգեկան այլափոխութիւնները, մէկ խօսքով դարուն պահանջը շատոնց սահմանափակած է բազմակրօնութեան ախոյեաններուն քանակը թուրքիոյ մէջ : Թուրք մտաւորականութեան, սպայութեան եւ միւս առաջաւոր դասերուն մէջ չա՛տ մեծ թիւ մը ունին միակին ամուսինները : Քաղաքներէն գրեթէ ջնջուած եւ գիւղերու մէջ քիչ տոկոսով շարունակուող բազմակնութեան օրէնքը փոխելը ոչ մէկ արտաքոյ կարգի դրժուարութիւն էր, տրուած ըլլալով բարենորոգումները հաստատող մարդոց վճռականութիւնն ու կամեցողութիւնը :

Երկրորդ առարկութիւնը այն է, որ Մուսթաֆա Քեմալները մինչաշփմեան իրենց քայլերով ու յանգուզն օրէնքներով մեզի ցոյց տուին, որ ո՛չ մէկ պատնէչի առջեւ կանգ առնել չեն ուզեր, երբ թուրք ազգի եւ հայրենիքի փրկութեան, յառաջդիմութեան ու արդիականացման կը վերաբերի խնդիրը : Եթէ բոլոր կրօնքները նոյն հաշիւն ու աֆիօնը չըլլային մարդկային ընկերութիւնը քնացնելու եւ ժանգոտելու տեսակէտէն, ու քրիստոնէութիւնը սեւէ լուջ առաւելութիւն ունենար իսլամութեան վրայ, ես համոզուած եմ՝ որ Քեմալը

չէր վարաներ եւ այսպիսի առաքելութեան մը դիմաց :

Ընկ. Ռուբէնը թո՛ղ վստահ ըլլայ, որ քրիստոնէութեան դպչող չըլլար քեմալականներու մէջ, որովհետեւ միակնութեան հիմքը քրիստոնէութեանէն աւելի հիմ է, եւ ազգի մը ճակատագրին հետ խաղացող իրապէս լուսամիտ եւ անկրօն տարրեր (որդիպիք են քեմալականները) հարկ եղած պայժառատեսութիւնը ունին ընտանիքի եւրոպական հասկացողութիւնն ու ըմբռնումը թուրքիոյ մէջ ընդհանրացնելու եւ օրէնք դարձնելու համար : Այս կէտին մէջ, Մուսթաֆա Քեմալը, աւելի քան երբեք հասունցած պահանջի մը ծնուցիչը հանդիսացաւ : Միակնութիւնը նորութիւն չէ թըրքութեան համար : Մենք ենք անտեղեակները :

Ընկ. Ռուբէն, պատմագիր Jonquiere-ի բերնով, Սուլթան Մահմուտ Բ.ի (1808) եւրոպականացման շարժման վիժումը բացատրելու տալով թէ «օսմանեան ժողովուրդը հասունցած չէր այդ բարենորոգումներուն համար, պէտք էր նախ եւ առաջ փարատել մոլեռանդութիւնը եւ տղիտութիւնը» :

1808-էն առիւն շատ բան փոխուեցաւ թուրքիոյ մէջ, որպէսզի —Jonquiereներու վերայ նկարուած յատակագծով քեմալական յետփոխութեան գուզակշիւր ընենք : Մահմուտ Բ.ները կրնային չյաջողել, բայց Քեմալները պիտի յաջողին, յաջողած են արդէն : Լաւ սկսուած գործը երաշխիքներու թագաւորն է :

Լսենք այս առթիւ «Թան»ի (26 Յուլիս, 1928) Պոլսոյ նոր թղթակցին յայտնութիւնները, որ ընկ. Ռուբէնի նախընտրած եւրոպացիներէն բոլորովին տարբեր գոյնով կը ներկայացնէ զէպրերն ու իրողութիւնները .

«Հանրապետութեան հռչակումէն ի վեր, թուրք կառավարութիւնը, շնորհիւ արժատական բարենորոգումներու, մեծ քայլեր առած է շաւիղին մէջ այն արեւմտեան քաղաքակրթութեան, որ հիմը դարձուցած է իր բարոյական, ընկերային, վարչական եւ քաղաքական վերականգնումի ծրագրին : Այս բարենորոգումները համապատասխանեցին բազմաթիւ թուրքերու գաղտնի փափաքներուն :

«Արդարեւ, ասոնք մինչեւ հիմա իրաւամբ իրենք-զիրենք վար կը դասէին թուրքիոյ մէջ